Եւ Ուրբաթս (10 Օգոստ.) զղագիէսքէրն փոխեցին և եղին (պոբոպ), և զղատին մեծ ևս փոխեցին և եղին (պոբոպ)։ Եւ օրս մեր Վարդապետն և Առաջնորդն ի Սուրբ Գէորք ժողով արարին իշխանացքս, և յամենայն եկեղեցիս վասն Երուսաղէմայ մի մի վէքիլ եղին թէ զինչ և լիցի և գործ մի անկանի՝ նոքա տեսցեն խորհրդակցութեամբ մեծամեծաց քաղաքիս։

Կիրակի Աստուածածին. ի յԱստուածածին գնացաք եւ մեր Վարդապետն պատարագ արար ԺԲ–իս։

Կիրակի ԺԹ–ի. լու եղեւ աւուրս՝ թէ պատրիգն Հոռոմոց խէթիշէրիֆ առեալ ի թագաւորէն վասն Երուսաղէմայ տեղեաց Հապէշիցն, զի երթեալ տիրեսցէ եւ թէ հնար եւս գոցէ՝ զմերս եւս։ Եւ զայս լըսեալ Վարդապետին մեր, ասաց քաղաքացոցս եթէ Զպատրիգն Հոռոմոց տանիմ ի զիւան և առնեմ ի ձեռաց նորին զխէթիշէրիֆն։ Եւ ոչ թողին ոմանք ի մէնջ քաղաքացոցս ոչ կամելով եթէ ոք որ ընդ Հոռոմս կամի գիպել՝ յառաջագոյն[1]) մեզ հուճէթ թող տայ, եթէ մի վնաս գայցէ՝ ինքն կրեսցէ զվնասն։ Զայս խօսս արկեալ ի մէջ արք ոմանք, եւ Վարդապետն ի լուռ լեալ եթէ Մեղք սուրբ Տանն զայդ ասողացն գլուխս լիցի։

Եւ Բշի օրս (20 Օգոստ.) Առաջնորդն եկն ի յԱստուածածին առ մեր Վարդապետն և Զ եկեղեցոյ իշխանքն և աւագիրիցունքն եկին և բան խօսեցան վասն Երուսաղէմայ, և ելեալ երկոքին վարդապետքն գնացին մօտ առ պատրիգն Երուսաղէմի Հոռոմոց. և բազում բանս խօսեցեալ մեր Վարդապետն առ պատրիգն եւ ասացեալ թէ Խէթիշէրիֆ ունիս դու, բե՛ր տեսցուք՝ թէ զի՛նչ է և վասն որո՛յ է։ Եւ պատրիգն երդումն արարեալ բազում՝ Թէ կայ ի մօտն իմ այդ քո

1) յառաջագոյն.